



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 24/21

29.11.2021թ.

ք. Երևան

ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների առնվազն մեկ հինգերորդը (այսուհետ՝ Դիմողներ) դիմել են ՀՀ Սահմանադրական դատարան՝ «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» 24.09.2021թ. ընդունված ՀՀ օրենքների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով:

Մասնավորապես, Դիմողները վիճարկում են «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» 24.09.2021թ. ընդունված ՀՀ օրենքների համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 9-րդ, 79-րդ, 179-րդ և 190-րդ հոդվածներին:

Ըստ Դիմողների՝ սահմանադրի կամքն առ այն, որ համայնքների կարծիքը պարտադիր պետք է լինի լսելի համայնքների միավորման կամ բաժանման ժամանակ, պայմանավորված է ոչ միայն համայնքների հանրային շահերի ապահովման ՀՀ Սահմանադրության 190-րդ հոդվածի իմպերատիվ պահանջով (որը թույլ է տալիս համայնքները միավորել բացառապես ելնելով հանրային շահերից), այլև առաջացող նոր համայնքում բնակիչների իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման նպատակով, որի բաղկացուցիչ մաս են կազմում ՏԻՄ-բնակիչ վարչական իրավահարաբերությունները: Այս տեսանկյունից՝ համայնքների կարծիքի ներկայացումը համայնքի լավագույն շահերի ներկայացման միջոց է: Ընդ որում՝ համայնքի կարծիքը չի կարող ներկայացնել բացառապես համայնքի ղեկավարը, քանի որ օբյեկտիվ իրականության մեջ տարատեսակ հանգամանքներով պայմանավորված՝

համայնքապետի կարծիքը կարող է չներկայացնել բնակիչների մեծամասնության կարծիքը: Հենց այս նպատակով էլ ստեղծվել և ներդրվել է տեղական հանրաքվեի ինստիտուտը: Համայնքի գործերի կառավարմանը համայնքի բնակիչները մասնակցում են մի քանի եղանակով՝ ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց միջոցով, կամ անմիջականորեն՝ համայնքային նշանակության հանրային հարցերը տեղական հանրաքվեով լուծելու միջոցով և համայնքի գործերի կառավարմանն անմիջականորեն մասնակցելու այլ եղանակներով (Սահմանադրության 183-րդ հոդված):

Դիմողները նշել են նաև, որ ՀՀ ԱԺ-ում նախագիծը շրջանառության մեջ է դրվել 09.09.2021թ., սակայն առանց մեկամսյա շրջանառության ժամկետը լրանալու՝ 24.09.2021թ. միաժամանակ տեղի են ունեցել նախագծի թե՛ առաջին, թե՛ երկրորդ ընթերցումները: Եվ սա այն դեպքում, երբ վիճարկվող ակտերով նախատեսվել է թվով 37 վերակազմավորման ծրագիր, և եթե անգամ համայնքների ղեկավարների կարծիքը համարենք համայնքի լսելիության ապահովում, առաջին ընթերցման դեպքում, ապա առաջինից երկրորդ ընթերցման դեպքում այն չի ապահովվել անգամ ձևական առումով, քանզի 1-ից 2-րդ ընթերցում ընկած ժամանակահատվածը բավարար չէր և չէր էլ կարող լինել բավարար թե՛ համայնքի ղեկավարի կողմից նախատեսվող փոփոխությունները համայնքին ներկայացնելուն, թե՛ դրա հիման վրա դրանց կարծիքներ և առաջարկություններ անելու համար:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Այսպես, Դիմողները վիճարկում են «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» 24.09.2021թ. ընդունված ՀՀ օրենքների համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 9-րդ, 79-րդ, 179-րդ և 190-րդ հոդվածներին:

Վիճարկվող օրենքները վերաբերում են Հայաստանի Հանրապետության մի քանի տասնյակ համայնքային բնակավայրերի միավորմամբ նոր համայնքների ձևավորմանը:

Նշված օրենքներն ընդունվել են 24.09.2021 թվականին և ուժի մեջ են մտել 06.10.2021 թվականին:

Սահմանադրության 9-րդ հոդվածի համաձայն՝

Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է տեղական ինքնակառավարումը՝ որպես ժողովրդավարության էական հիմքերից մեկը:

Սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝

Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Սահմանադրության 179-րդ հոդվածի համաձայն՝

1. Տեղական ինքնակառավարումը տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքն ու կարողությունն է՝ համայնքի բնակիչների շահերից ելնելով, Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, սեփական պատասխանատվությամբ լուծելու համայնքային նշանակության հանրային հարցերը:

2. Տեղական ինքնակառավարումն իրականացվում է համայնքներում:

Սահմանադրության 190-րդ հոդվածի համաձայն՝

Հանրային շահերից ելնելով՝ համայնքները կարող են օրենքով միավորվել կամ բաժանվել: Ազգային ժողովը համապատասխան օրենք ընդունելիս պարտավոր է լսել այդ համայնքների կարծիքը:

Այսպես, վեր նշված օրենքների վիճարկման հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ վարչատարածքային բաժանման փոփոխությունների վերաբերյալ օրենսդրական նախաձեռնության հարցով տեղական հանրաքվե չի նախաձեռնվել և համայնքի բնակիչների կարծիքը հաշվի չի առնվել:

Սահմանադրության 190-րդ հոդվածի համաձայն՝ հանրային շահերից ելնելով՝ համայնքները կարող են օրենքով միավորվել կամ բաժանվել: Ազգային ժողովը համապատասխան օրենք ընդունելիս **պարտավոր է լսել** այդ համայնքների կարծիքը:

Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին: Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների,

հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով:

«Տեղական հանրաքվեի մասին» օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ տեղական հանրաքվեն համայնքի գործերի կառավարմանն անմիջականորեն մասնակցելու եղանակ է, որն իրականացվում է տվյալ համայնքի բնակիչների համայնքային նշանակության հանրային հարցերով քվեարկության միջոցով:

Նույն օրենքի 4-րդ հոդվածը նախատեսում է Կառավարության կողմից համայնքների միավորման կամ բաժանման վերաբերյալ օրենսդրական նախաձեռնության դեպքում համապատասխան համայնքների բնակիչների՝ համայնքների միավորման կամ բաժանման հարցով տեղական հանրաքվե նախաձեռնելու **իրավունքը**:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ տեղական ինքնակառավարումը տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքն ու կարողությունն է համայնքի բնակիչների շահերից ելնելով, Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, սեփական պատասխանատվությամբ լուծելու համայնքային նշանակության հանրային հարցերը:

Տեղական ինքնակառավարման մարմիններն են համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը: Վերջիններիս լիազորությունների շրջանակը սահմանված է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով, որի 18-րդ հոդվածով սահմանված են համայնքի ավագանու լիազորությունները, 35-51-րդ հոդվածներով՝ համայնքի ղեկավարի: Նշված հոդվածների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ համայնքի ավագանին համայնքի վարչատարածքային բաժանման փոփոխության դեպքում համայնքի բնակիչների անունից հանդես գալու և համայնքի կարծիքը հայտնելու իրավասություն չունի: Ինչ վերաբերում է տվյալ հարցում համայնքի ղեկավարի լիազորություններին, ապա համայնքի վարչատարածքային բաժանման փոփոխության դեպքում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում ասվում է՝ «Համայնքի ղեկավարը տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները. 3) կազմակերպում է տեղական ինքնակառավարմանն առնչվող օրենսդրական և ենթօրենսդրական կարևորագույն նախաձեռնությունների և նախագծերի, մասնավորապես համայնքի զարգացման ծրագրերի և տարեկան բյուջեի,

համայնքի կողմից մատուցվող հանրային ծառայությունների ոլորտներում համայնքի ավագանու և ղեկավարի որոշումների, համայնքի գլխավոր հատակագծի, քաղաքաշինական, բնապահպանական, կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ***վարչատարածքային բաժանման ծրագրվող փոփոխությունների վերաբերյալ հանրային լսումներ կամ քննարկումներ, դրանց վերաբերյալ առաջարկությունների ընդունումը և ներկայացումը նախաձեռնությունների և նախագծերի հեղինակներին***»:

Վերը մեջբերված իրավական ակտերի վերլուծությունը թույլ է տալիս հանգել այն եզրակացության, որ «Տեղական հանրաքվեի մասին» օրենքը նախատեսում է Կառավարության կողմից համայնքների միավորման կամ բաժանման վերաբերյալ օրենսդրական նախաձեռնության դեպքում համապատասխան համայնքների բնակիչների՝ համայնքների միավորման կամ բաժանման հարցով տեղական հանրաքվե նախաձեռնելու իրավունք: Իր հերթին, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքը իրավունք է վերապահել համայնքի ղեկավարին Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից վարչատարածքային բաժանման ծրագրվող փոփոխությունների վերաբերյալ հանրային լսումներ կամ քննարկումներ կազմակերպելու, դրանց վերաբերյալ առաջարկություններ ընդունելու և նախաձեռնությունների և նախագծերի հեղինակներին ներկայացնելու իրավունք:

Այսինքն՝ օրենսդիրը վարչատարածքային բաժանման փոփոխությունների դեպքում համայնքի լաված լինելու իրավունքի երկու եղանակ է նախատեսել.

1. տեղական հանրաքվե,

2. համայնքի ղեկավարի միջոցով՝ վերջինիս կողմից վարչատարածքային բաժանման ծրագրվող փոփոխությունների վերաբերյալ հանրային լսումներ կամ քննարկումներ կազմակերպելու, դրանց վերաբերյալ առաջարկություններ ընդունելու և նախաձեռնությունների և նախագծերի հեղինակներին ներկայացնելու ձևով («Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ համայնքների միավորման կամ բաժանման դեպքում այդ համայնքների ղեկավարներն իրավունք ունեն Ազգային ժողով ներկայացնելու միավորման կամ բաժանման վերաբերյալ իրենց գրավոր կարծիքը, իսկ Ազգային ժողովում կամ գլխադասային հանձնաժողովում հարցի քննարկման ընթացքում՝ հանդես գալու հարակից զեկուցմամբ):

Տեղական հանրաքվեն և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները համայնքի բնակիչների ազատ կամքի արտահայտման (ինքնակառավարման իրավունքի իրականացման) բարձրագույն ձևեր են և անփոխարինելի՝ լուծվող խնդիրների շրջանակներով և իրավական կարգավորմամբ: Տեղական հանրաքվեն համայնքի անդամների կողմից համայնքի գործերի կառավարմանն անմիջական մասնակցելու ձև է: Տեղական հանրաքվեի ինստիտուտը կարևորվում է նրանով, որ համայնքի բնակիչները հնարավորություն են ունենում անմիջականորեն մասնակցելու համայնքային նշանակության հարցերի լուծմանը և իրենց քվեարկության միջոցով որոշելու, թե այս կամ այն հարցը ինչ լուծում պետք է ստանա:

Անդրադառնալով տեղական հանրաքվեի ինստիտուտին՝ Սահմանադրական դատարանն իր՝ 2007 թվականի դեկտեմբերի 18-ի ՍԴՈ-721 որոշման մեջ արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. «10. Ուստի տեղական հանրաքվեն օրենքով թույլատրելի քննարկման հարցերի շրջանակով, և որպես համայնքային նշանակության հարցերի լուծման միջոց, տեղական ինքնակառավարման գործունեության վերահսկման ապահովման նույնքան կարևոր երաշխիք է, որքան պետական և հասարակական վերահսկողության՝ օրենքով նախատեսված մյուս ձևերը, որոնք ամբողջությամբ կոչված են համայնքներում ապահովելու մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների անխախտելիությունը: Ուստի իրավական կարգավորման հիմնական խնդիրն է ելնել համայնքի արդյունավետ կառավարման նպատակով պետական և հասարակական վերահսկողության բոլոր ձևերի ու միջոցների ներդաշնակ և ամբողջական գործադրման անհրաժեշտությունից, որը համահունչ է ինչպես ՀՀ Սահմանադրության 1, 2, 3 և 5 հոդվածներում ամրագրված սահմանադրական կարգի սկզբունքներին և Հայաստանի Հանրապետությունում ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետության հետագա զարգացման նպատակներին, այնպես էլ Եվրոպայի խորհրդի շրջանակներում հաստատված իրավակիրառական պրակտիկային»:

Սահմանադրական դատարանը 2021 թվականի մայիսի 14-ի ՍԴՈ-1593 որոշման մեջ աձանագրել է. «Ամփոփելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ համայնքների միավորման կամ բաժանման գործընթացը

կարգավորող իրավանորմեր սահմանելիս օրենսդիրը պետք է առաջնորդվի սահմանադրական կարգավորումներից բխող հետևյալ իրավական մոտեցումներով.

1) համայնքների միավորման կամ բաժանման հիմքում պետք է ընկած լինեն հանրային շահերը.

2) համայնքների միավորման կամ բաժանման ժամանակ անհրաժեշտ է ապահովել շահագրգիռ **համայնքների բնակիչների կարծիքն Ազգային ժողովում լսելի դարձնելու մեխանիզմ**.

3) այն պետք է գործադրվի ժամանակին, այսինքն՝ համայնքների միավորման կամ բաժանման գործընթացի այն փուլում, երբ համայնքները կունենան իրենց համար հիմնարար նշանակություն ունեցող այդ հարցի վերաբերյալ իրենց կարծիքը ներկայացնելու և այդպիսով կայացվող վերջնական որոշման վրա ազդելու հնարավորություն.

4) այն պետք է գործադրվի այնպիսի եղանակով, որը կապահովի համայնքների միավորման կամ բաժանման հարցի վերաբերյալ շահագրգիռ **համայնքների կարծիքը վեր հանելու և ներկայացնելու իրական և արդյունավետ հնարավորություն**»:

Վերոգրյալից հետևում է, որ Սահմանադրությունը հնարավոր է համարում համայնքների միավորումը կամ բաժանումը, որն իրականացվում է բացառապես Կառավարության նախաձեռնությամբ Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքով, որի հիմքում, ինչպես արդեն նշվեց, կարող են դրվել բացառապես հանրային շահերը: Այսինքն՝ համայնքների միավորման կամ բաժանման բոլոր դեպքերում անհրաժեշտ է պատշաճ ընթացակարգերի միջոցով վեր հանել այն հանրային շահերը, որոնք կայանանավորեն նման փոփոխությունների կատարման անհրաժեշտությունը՝ բացառելով համայնքների միավորման կամ բաժանման հիմքում ցանկացած այլ շահ դնելը:

Միաժամանակ, Սահմանադրությունը, հաշվի առնելով համայնքների միավորման կամ բաժանման կարևոր նշանակությունը համապատասխան համայնքների համար, ամրագրում է այդ գործընթացում վերջիններիս լսված լինելու իրավունքը: Հատկանշական է, որ Սահմանադրության 190-րդ հոդվածով, որպես համայնքների միավորման կամ բաժանման հարցի շրջանակներում լսված լինելու իրավունքի կրող, նշվել է համայնքը, ուստի այդ գործընթացում Ազգային ժողովը պետք է լսի համայնքի՝ որպես մեկ կամ մի քանի բնակավայրերի բնակիչների հանրության կարծիքը:

2021 թվականի մայիսի 14-ի ՄԴՈ-1593 որոշման մեջ Սահմանադրական դատարանը նշել է. «Միաժամանակ, օրենսդրական կարգավորումները պետք է կառուցվեն այն տրամաբանությամբ, որ գործնականում ապահովեն Սահմանադրության 190-րդ հոդվածով ամրագրված պահանջի կատարումը՝ շահագրգիռ համայնքներին հնարավորություն տալով առավել օբյեկտիվ ներկայացնել իրենց կարծիքը: Սահմանադրական դատարանը, հաշվի առնելով սահմանադրական վերը նշված կարգավորումները և տեղական հանրաքվեի՝ որպես համայնքների կարծիքը վեր հանելու եղանակի բացառիկ արդյունավետությունը, գտնում է, որ հաշվի առնելով առանձին իրավիճակների առանձնահատկությունները՝ կոնկրետ դեպքում համայնքների օբյեկտիվ կարծիքը վեր հանելու արդյունավետ այլ եղանակների բացակայության պայմաններում համայնքի կարծիքը պարզելու նպատակով պետք է ապահովվի տեղական հանրաքվեի անցկացումը: Ընդ որում, այդ գործընթացին վերաբերող կարգավորումները (այդ թվում՝ նման նախաձեռնության իրավունք ունեցող անձանց շրջանակը սահմանող, հանրաքվեի նախապատրաստումը և անցկացումը կարգավորող իրավանորմերը) պետք է ունենան այնպիսի բովանդակություն, որ Կառավարության կողմից համայնքների միավորման կամ բաժանման վերաբերյալ օրենսդրական նախաձեռնության դեպքում համայնքների միավորման կամ բաժանման հարցով տեղական խորհրդատվական հանրաքվեն գործնականում հնարավոր լինի անցկացնել: Այս կապակցությամբ պետության պարտականությունն է համայնքների միավորման կամ բաժանման հարցի վերաբերյալ համայնքի կարծիքը տեղական հանրաքվեի միջոցով արտահայտելու իրավունքի արդյունավետ իրականացման համար օրենսդրական անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգերի և ընթացակարգերի ամրագրումը:»:

Հարկ է նկատել, որ հանրային լուսման և քննարկումների կազմակերպման կառուցակարգը կարող է արդյունավետ լինել այն դեպքում, երբ համայնքի բնակիչների թիվը համեմատաբար փոքր է: Մեծաթիվ բնակչություն ունեցող համայնքների պարագայում միայն հանրային լուսման կամ քննարկումները չեն կարող տալ բնակիչների օբյեկտիվ կարծիքը վեր հանելու իրական հնարավորություն: Տվյալ պարագայում, կարծում ենք, Սահմանադրության 190-րդ հոդվածի իրացումն ապահովելու նպատակով պետք է կազմակերպվի տեղական հանրաքվե:

Սահմանադրական դատարանի կողմից բազմիցս նշվել է, որ օրենքները Սահմանադրությանը պետք է համապատասխանեն ոչ միայն իրենց բովանդակությամբ,

այլ նաև ընդունման կարգով, իսկ Սահմանադրությունն ամրագրում է օրենքների ընդունմանը վերաբերող սկզբունքային պահանջները: Մասնավորապես՝ նման պահանջներից է համայնքների միավորման կամ բաժանման հարցի լուծումից առաջ Ազգային ժողովի կողմից շահագրգիռ համայնքների կարծիքը լսելու պահանջը: Հետևաբար, շահագրգիռ համայնքների կարծիքը լսելու պայմանները չապահովելու պարագայում Ազգային ժողովի կողմից օրենքի ընդունումը կհանգեցնի Սահմանադրության 190-րդ հոդվածով ամրագրված պահանջի խախտման:

Կարծում ենք, վիճարկվող օրենքների ընդունման պրոցեսում քննարկման առարկա չի դարձվել այն, թե վարչատարածքային բաժանման փոփոխությունների ենթարկվող համայնքները մեծաթիվ բնակչություն ունեն, թե ոչ, որպեսզի ըստ այդմ պարզ լիներ, թե որ համայնքում է անհրաժեշտ տեղական հանրաքվե կազմակերպել, իսկ որ համայնքում բավարար կլինեն հանրային քննարկումները՝ օրենսդրական նախաձեռնության վերաբերյալ համայնքի կարծիքը վեր հանելու համար (նշենք, որ տեղական հանրաքվե չի կազմակերպվել, վարչատարածքային բաժանման փոփոխությունների ենթարկվող մի քանի տասնյակից ավելի համայնքների բնակիչների կարծիքը նշված փոփոխությունների վերաբերյալ լսելի չի դարձվել):

Ուստի, հիմք ընդունելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ վիճարկվող օրենքներն ընդունվել են Սահմանադրության 190-րդ հոդվածի իմպերատիվ պահանջի խախտմամբ, օրենքների ընդունման ժամանակ թույլ են տրվել ընթացակարգային խախտումներ, որոնք իրենց հերթին կասկածի տակ են դնում իրեն իրավական և ժողովրդավարական հռչակած պետության սահմանադրորեն երաշխավորված սկզբունքները:

Հարկ ենք համարում նշել նաև, որ Սահմանադրական դատարանի 2021 թվականի մայիսի 14-ի ՍԴՈ-1593 որոշմամբ «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1.1-ին մասը, 6-րդ հոդվածի 2-րդ մասն այնքանով, որքանով չեն ապահովում համայնքների միավորման կամ բաժանման հարցի վերաբերյալ համայնքի կարծիքը տեղական հանրաքվեի միջոցով արտահայտելու իրավունքի արդյունավետ իրականացման համար օրենսդրական անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր, ճանաչվել են Սահմանադրության 179-րդ հոդվածի 1-ին մասին և 190-րդ հոդվածին հակասող և անվավեր:

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

- «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» 24.09.2021թ. ընդունված ՀՀ օրենքների համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 9-րդ, 79-րդ, 179-րդ և 190-րդ հոդվածներին վիճահարույց է:

 Recoverable Signature

Համակարգող՝

X Lyudvik Davtyan

Լյուդվիկ Դավթյան

Signed by: DAVTYAN LYUDVIK 1407840169